հրջեալ մեր ի բազում աշխարհս. եւ գնացեալ մինչև ի Ս. Բա-ղաքն յԵրուսաղէմ, գրեթէ տեսաք աչօք մերովք զամենայն վարդապետս՝ եպիսկոպոսս՝ և կաթողիկոսս՝ և ոչ գտաք համե-մատ նմա»․ (Նոր Ջուղա․ Բ․ հատ․ էջ 27)։

ՅԱԿՈԲ ԵՒ ՍՏԵՓԱՆ. — Թաշճի պաշի Վարդան աղայի որ-դիները, որ 1849ին կը նուիրեն Ս. Հրեշտակապետ եկեղեցիի աւազանը, ինչպէս յայանի կ'ըլլայ հետևեալ յիշատակարանէն. «Յիշատակ է Ս. աւազանս, զոր ընծայեցին Թաշճի պաշի հան-գուցեալ Վարդան Աղայի բարեժառանգ որդիքն Պարոն Յակովբ և Պարոն Ստեփանն. 1849»։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԲ.— Մբ. 1843ին։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԲ. — Մբ. 1693ին կը պաշտօնավարէր Ս. Յարութեան եկեղեցիին մէջ. ինչպէս կը յիշուի Մինաս Ամդե-ցիի Օրագրութեան մէջ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴՊԻՐ, ՊՈԼՍԵՑԻ.—Մբ. Ս. Յակոբի վանքին մէջ ընդօրինակած է հետևեալները, ՌՃՁԴ (= 1735) թուին Մեկն. Մարկոսի Աւետարանին, ՌՃՂ (=1741) Գրի. Տաթևացիին Լուծ-մունք դժուարինաց բանից Յոբայ. 1748ին Մարտիրոս վրդ.ի Սնա-ղնեաց գիրքը. առաջին երկուքը կը գտնուին Ս. Յակոբի վան-քին մատենադարանը (Թ. 949 և 954). իսկ երրորդը՝ Ս. Էջմի-ածնի մատենադարանը (Էջմ. Ցուց. Թ. 39). նաև Մաշտոց մը ՌՃՁԸ (= 1739) (ՄՁ. Թ. 676). 1740ին Հաւաքածոյ մը (ՄՁ. Թ. 583). հաւանաբար իրն է նաև 1713ին գրուած Քաղուածոյ Աստուածաբանութեան Այգերցի գիրքը (ՄՁ. Թ. 884)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՊՍ. ԴԱՊԷՆՃԵԱՆԵԱՆ, ԵԴԵՍԱՑԻ.— Մբ. Ծ. 1785ին. աշկ. Մարկոս եպս.ի. ՓԿԵ. (1821—1825). Առ. Զմիւռ-նիոյ (1825—1829). Առ. Պրուսայի և Կուտինայի (1829—1836). Մշոյ և Կարնոյ միացեալ վիճակաց (1836—1838). 1838ին Մշոյ Ս. Կարապետի վանահայր Կիւրավցի Պետրոս եպս.ի տեղ (✻ 1845). կը պատմուի թէ՝ «Յարութիւն եպս. Ս. Կարապետի վանքի հաշիւն ուզեց Կուրավցիէն. տեղւոյն երևելի Բէօսա-օղլու Համբարձումը քանի մը իշխաններով ասացին թէ՝ դուն որ եկած ես Երուսաղէմէն, և այնտեղէն ալ բաւական բաներ բերեցիր. միթէ անոնք ալ քեզանից հաշիւ առա՞ն թէ ոչ. ապա թէ ոչ. դու ի՞նչպէս Կուրավցիէն հաշիւ կ'ուզես. քանի որ